ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՇՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/35» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 02.06.2025թ. ժամը 12:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	Ժորա Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ՝	Վարուժան Հովհաննիսյան
	Կարեն Ասատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լիանա Շելեգոն

Ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստն համարեց բացված:

1. **Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին**

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, էլ. փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հարցում է եկել մասով հետևյալ բովանդակությամբ՝

Հարցում 1 - ՇՄԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 մրցույթի հարգելի համակարգող, պարզաբանեք, խնդրեմ, կվերանայեք արդյոք 1-14 չափաբաժինների լամպերի համար ձեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը? Այդպիսի տվյալներով լապեր ուղղակի չկան: Նրանց աշխատանքային ժամանակները ընդամենը 50-1000 ժամ կարող են լինել, իսկ լուսային ջերմությունը մաքսիմում 3300K:

Հարցում 2 - Հարգելի գործընկեր, Մրցույթի 36-րդ չափաբաժնով պահանջվում է ջրի զտման ապարատ, որի տեխնիկական բնութագրերում նշել եք, որ այն պետք է լինի ջրի հոսքի ավտոմատ կառավարման հնարավորությամբ: Խնդրում ենք տալ պարզաբանում, թե ինչ է իրենից ներկայացնում ջրի հոսքի ավտոմատ կառավարման գործառույթը, հնարավորինս մանրամասն նկարագրեք այն՝ հետագայում երկիմաստ մեկնաբանություններից խուսափելու համար: Հարգանքներով,

Գնահատող հանձնաժողովը ներկայացրել է հետևյալ պարզաբանումը՝

Պարզաբանում 1 - Հարգելի մասնակից հրավերով ներկայացված 1-14 չափաբաժինների հալոգեն լամպերի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են շուկայում առկա ապրանքատեսակներին:

Պարզաբանում 2 - Հարգելի մասնակից, ջրի զտման ապարատը պետք է հնարավորություն ունենա կարգավորել ջրի հոսքի տատանումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերն առկա են և համապատասխան են,** բացառությամբ «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի և «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կցած հայտերի, մասնավորապես՝
   - «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի Հավելված 1.3 -ում /ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ/ կցված է նախորդ տարվա հայտարարագիրը:
   - «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի Հավելված 1 –ում /ԴԻՄՈՒՄՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը: Կցված չէ Հավելված 1.3 -ը /ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ/, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին,

լրացված չէ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանում սյունակները:

Առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները և կցել շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի հունիսի 4-ին ժամը 12:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ժորա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վարուժան Հովհաննիսյան

Կարեն Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Շելեգոն